Մանկտի՛ք, երբ ի տաց նըստիք, ձենեցէք աղքատք ձեզ ընկեր.
Մեռնիք ’ւ ի յանդէն երթայք, կու նըստիք քանց մէկ մ’այլ ի վեր:

Խ Է .

Ելայ ժողվեցի զիմ մեղք ու դըրի առջեւս ու լացի.
Յանդէնըն կարվան կ’երթար, շալկեցի ’ւ ի հետ գընացի.
Հրաշտակն այլ ի դէմս ելաւ թ’ «Ո՞ւր կ’երթաս ողորմի ու լալի.
Այդ շալկիկդ որ դու ունիս՝ անդէնին քեզ տեղ չի ընկնիր:

Խ Ը .

Մէկ մարդ մի ճուհար ունէր ’ւ ի խելաց շահել չըկարաց.
Զինչ խելքն ի վերայ եկաւ՝ նայ գընաց ճուհարն ի ձեռաց.
Գընաց նա ի վայր նըստաւ ողորմիկ ու շատ մի իլաց.
Նոր լացն այլ ի՞նչ շահ է երբ գընաց ճուհարն ի ձեռաց:

Խ Թ .

Հոգին հողվըրտովն անցաւ ու զմարմինն ի հողն անիծեց,
Թէ «Զմեղքն ես ու դու արաք, յանդէնն ի՛մ երեսն ամաչեց»:
Մամինն ի հողուն ի դուրս այս խօսօք զիովին վըճարեց,
«Ես հող էի՝ հող դարձայ, քո ամալն է որ զքեզ պատրեց»: